



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ Ա Ր Ա Ն  
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«15» փետրվարի 2018 թ.  
ք.Գավառ

N 92-Ա

**Կ Ա Ր Ե Ն Գ Ո Ւ Ր Գ Ե Ն Ի Խ Ա Ջ Ա Տ Ր Յ Ա Ն Ի Մ Ա Ս Ի Ն**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3.1 և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2010թ. հոկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորում անցկացնելու և քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու կարգը սահմանելու մասին» N 818-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 36-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի N 1797-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կանոնադրության 23-րդ կետի «ե» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու համար տրված N 004330 հավաստագիրը և Կարեն Գուրգենի Խաչատրյանի դիմումը՝

Հրամայում եմ՝

1. Կարեն Գուրգենի Խաչատրյանին 2018 թվականի փետրվարի 15-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Վարդենիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության առաջին կարգի մասնագետի /ծածկագիր՝ 64-4.3-48/ պաշտոնում, երեք ամիս փորձաշրջանով:

Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



*Handwritten signature*

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ